«POWERPLAY» ՀԱՎԵԼՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՑՈՒՑԱԿԸ

1. **«PowerPlay»** հավելյալ ծառայությունը մատուցվում են «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից բացառապես ֆիզիկական անձանց համար:
   Ակտիվացնելով **«PowerPlay»** հավելյալ ծառայությունը՝ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ Բաժանորդը, ի լրումն իր սակագնային փաթեթով սահմանված հիմնական պայմանների, ստանում է **Աղյուսակ 1-ում** սահմանված պայմանները:
   Աղյուսակ 1. «PowerPlay» հավելյալ ծառայության գնացուցակ:

Սակագնային փաթեթ	**«PowerPlay»**
Ինտերնետի արագություն	50 Մբ/վ
Բաժանորդագրություն www.gfn.am-ից	**Premium** բաժանորդագրություն 3080 GFN.AM-ից
Հավելյալ ծառայություն «Տուրբո»[1]	ներառված[2]
Ամսավճար	**3,900 դրամ**

   «PowerPlay» հավելյալ ծառայության տրամադրման այլ պայմաններ՝
2. **«PowerPlay»** հավելյալ ծառայությունը տրամադրվում են ի լրումն ստորև հրամաններով սահմանված «Մոնո» և «Ռ-Մաքս» ծառայությունների/սակագնային փաթեթների հիմնական պայմանների:
3. **«PowerPlay»** հավելյալ ծառայության բաժանորդագրության դեպքում ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցումը կամ վճարումների ուշացման պատճառով ծառայությունների մատուցման կասեցումը կատարվում է «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ գլխավոր տնօրենների թիվ 032-06-2017-Հ5-Լ հրամանով սահմանված կարգով:
4. Բաժանորդագրվելով **«PowerPlay»** հավելյալ ծառայությանը՝ Բաժանորդն առանց ժամկետային սահմանափակումների կարող է յուրաքանչյուր պահի դադարեցնել բաժանորդագրությունը **«PowerPlay»** հավելյալ ծառայության:
5. Եթե Բաժանորդը բաժանորդագրվել է **«PowerPlay»** հավելյալ ծառայությանը և այդ ընթացքում կատարում է ծառայության/սակագնային փաթեթի փոփոխություն, ապա շարունակում է օգտվել իր կողմից ակտիվացված **«PowerPlay»** հավելյալ ծառայությունից, եթե նոր ծառայության/սակագնային փաթեթի պայմաններով հնարավոր է ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը:

---

[1] «Տուրբո» ծառայությունը մատուցվում է բաժանորդի ընտրությամբ, այինքն անկախ այն բանից «Տուրբո» ծառայությունը ներառված է թե հասանելի տվյալ սակագնային փաթեթի շրջանակում, վերջինս տրամադրվում է բացառապես Բաժանորդի ցանկությամբ: Եթե բաժանորդը չի ցանկանում ակտիվացնել «Տուրբո» ծառայությունը, այն չի ակտիվանում, և համապատասխանաբար «TurboSpeed AX1800» սարքը չի տեղադրվում բաժանորդային հասցեում:

[2] «Տուրբո» ծառայության շրջանակում TurboSpeed AX1800 Սարքի օգտագործման իրավունքը ներառվում է սակագնային փաթեթում՝ առանց տարեկան բաժանորդագրության անհրաժեշտության: Բաժանորդը կարող է հրաժարվել սույն կետում սահմանված պայմանից: Օպերատորի և Բաժանորդի միջև Բաժանորդային պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում TurboSpeed AX1800 Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին՝ Բաժանորդագրության պայմանագրի դադարեցման օրվանից 5 (հինգ) օրվա ընթացքում: Սարքը ժամանակին չվերադարձնելու դեպքում «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն իրավունք ունի պահանջել Բաժանորդից Սարքի հանձնման-ընդունման ակտում նշված գումարն ամբողջությամբ: